

Systems Development: Detailed Design Study Guide

Հարցեր

Կարդալ համապատասխան գրականությունը պատասխանելու հետեւյալ հարցերին.

Համագործակցության դիագրամներ եւ փսեւդոկոդ

Տվյալ փուլի համար մեր հիմնական գործիքներն են համագործակցությունների դիագրամները եւ փսեւդոկոդը: Համաձայն հանձնարարության, նախատեսվում է ստեղծել յուրաքանչյուրից մեկական:

- Ինչու՞ մն է համագործակցության դիագրամների առավելությունը փսեւդոկոդի նկատմամբ:
- Իսկ հակառակը
- Որոշ մարդիկ պնդում են, որ փսեւդոկոդը անհրաժեշտ չէ եւ փոխարինվում է ռեալ կոդով: Ինչու՞ է տվյալ պնդումը սխալ:
- Ինչու՞ մն է առավելությունը փսեւդոկոդի ռեալ կոդի նկատմամբ նախագծման փուլի ընթացքում:

Աղյուսակների նախագծում

Մեր համակարգը իրականացնելիս մեքն օգտագործում ենք աղյուսակներ ինֆորմացիայի երկարատեւ պահպանման համար: Մենք օգտագործում ենք տվյալների ռեյացիոնալ շտեմարան եւ ոչ թե օբյեկտային շտեմարան: Ռեյացիոնալ աղյուսակները պարփակված չեն, այսինքն պարունակում են միայն տվյալներ եւ ոչ թե մեթոդներ (ֆունկցիաներ)

- Կա՞ն արդյոք առավելություններ տվյալները պահպանելու աղյուսակի մեջ ի տարբերություն տվյալների պահպանման օբյեկտների մեջ
- Նորմալիզացիայի ձեւերը նպատակ են հետապնդում խուսափելու մաթեմատիկական խնդիրներից տվյալների ներկայացման ժամանակ: Ի՞նչ տիպի պրոբլեմից է փորձում խուսափել նորմալիզացիայի առաջին ձեւը:

- Ի՞նչ կասեք նորմալիզացիայի երկրորդ եւ երրորդ ձևերի մասին:

Մեծամասամբ, հասցե պարունակող դաշտերը չեն համապատասխանում նորմալիզացիայի 3-րդ ձևին, քանի որ յուրաքանչյուր փողոց ունի հստակ ինդեքս (postal code) եւ տվյալ կախվածությունը կարելի է հաշվարկել

- Ինչու՞ մենք առհամարում ենք նորմալիզացիայի 3-րդ ձևը հասցե պարունակող դաշտի համար:

Մարդկային ֆակտորներ

Որոշ մարդիկ կարծում են, որ Apple-ը շատ լավն է, իսկ Microsoft-ը՝ ոչ. Ո՞ր ֆիրման ավելի շատ փող է ծախսում դիզայնի վրա: Apple-ը ավելի բարձր է դասում դիզայնը մարդկանց համար, մինչդեռ Microsoft-ը դիզայնի հարցում շեշտը դնում է խմբերի եւ կազմակերպությունների վրա:

- Apple-ը ֆիրմային պատկանող վեբ կայքում նշվում է «լավ» դիզայնի 7 հիմնական բնութագրերը: Համեմատեք Windows համակարգիչը եւ ձեր բջջային հեռախոսը: Ո՞րն է ավելի շատ համապատասխանում այդ 7 բնութագրերին:
- Gnome-ին պատկանող վեբ կայքում նշվում է «լավ» դիզայնի 9 հիմնական բնութագրերը: Օրինակի բերեք երկու համակարգ, որոնցից մեկը համապատասխանում է այդ 9 բնութագրերին, մյուսը՝ ոչ:
- Համեմատեք այդ բնութագրերը մեր հիմնական 4 հնարքների հետ տրված դասախոսության մեջ

Բառապաշար

Յուրաքանչյուր բառ ունի հատուկ տեխնիկական նշանակություն: Գտեք ներքոհիշյալ բառերի համարժեքները հայերենում եւ ռուսերենում:

- 1NF
- 2NF
- 3NF
- Collaboration
- Column
- Data item

- Factors
- Foreign key
- Human factors
- Index
- Key
- Message
- Natural language
- Normalization
- Notation
- Primary key
- Principle
- Pseudo
- Relation
- Relational algebra
- Query
- Row
- Table